

Hentchak :
Organe Central
DU PARTI
HENTCHAKISTE.

Հ Ն Չ Ա Կ

Journal Arménien
mensuel
XIX Année

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՄԻՋՏ ՊԵՏՐԱՍՏ

Վովկասի փոխարքայի դահլիճում կայացած Համագումարի վիճաբանութիւններից երեք զԸԼԽԱՆՈՐ կէտեր կան, որ ուշադրութիւնից չախտի վրիպեցնել և որոնց վրայ մասնաւորապէս պիտի շեշտել :

Թէ՛ փոխարքան, թէ՛ նրա ներկայացուցիչը և թէ՛ բոլոր նրանք՝ որոնք Յարիզմի պաշտպաններն են համարուում, բաց է ի բաց հրաժարուեցան մանրակրկիտ քննութեան առնելու այն մղիչ պատճառը, որ հայ-թաթարական ընդհարումներն էր առաջ բերել : Եւ եթէ անկախ նրանց կամքից թուուցիկ նկատողութիւններ մէջտեղ եկան, ապա դրանք այնքան և այնչափով, որքան որ նրանք շօշափում, շողքորթում էին Վաշկովի ինքնասիրութիւնը և մանրիկ քարեր շարտում դէպի նրա « հակառակորդ Վաշկին » փոխարքային աւելի հաճելի լինելու համար :

Վաշկինին վար գարկելը, նրան միայն պատասխանատու բռնելը, իսկ Վօրօնցով-Վաշկովին՝ եղած կատարուածներին՝ անմասն համարելը — դրանք բառեր էին, որոնք պարտական շողքորթութիւնից այն կողմը չէին անցնում :

Վաշկին, Վօրօնցով-Վաշկով՝ դրանք բոլորով մի սխտէմի, մի կաղապարի ներկայացուցիչ, արտայայտիչներ են՝ զանազան ձևերով, նայելով տեղին և ժամանակին Վաշկինը, արաւ այն, ինչ որ Վաշկովը կանէր, եթէ ժամանակին ինքը նրա տեղը եղած լինէր : Եւ ընդհակառակը՝ Վաշկինը կանէր այն՝ ինչ որ Վաշկովի մեղրածորան շթուներն են անում : Թէ՛ և տարբեր անձնաւորութիւններ, բայց նրանք երկուսն էլ միևնոյն կտաւի կրտորիցն են, նրանք իրարու լրացնող մասեր են և արձագանք տուող մի և նոյն կամքի, տիրապետական, կառավարչական մի և նոյն եղանակի :

Ժողովուրդ ժողովուրդի դէմ, ազգ ազգի դէմ հանել՝ կռուացնելը, նրանց իրարմով չէզոքացնելը՝ ներքին քաղաքականութեան մի սխտէմ է, որ վաղուց ի վեր ընդունած և յաճախ էլ գործադրած են Մեղիկան, Մասրո-Հունգուրիան, և այլն : Իր անկման ուրուականի առաջը Յարիզմը նոյն այլ

« սրբագործում » քաղաքականութեանը զիմեց Քանապետութեան համար բարձրօրէն թողատրելի է ամէն միջոց, ինչ որ նպատում և ոյժ է տալիս իր պահպանմանը և ցանկութիւններին : Եւ եթէ Վովկասի մէջ « ժողովուրդ ժողովուրդ չէզոքացրնելու » գործունէութեան եղանակը իրականացաւ՝ դա ո՛չ պատահական մի արարք էր և ո՛չ էլ մի անհատի քմահաճոյքի արդիւնք, ո՛չ, դա արդիւնք էր կեղրոնական իշխանութեան ըմբռնումներին՝ պետական-կառավարչական գործերը ղեկավարելու նկատմամբ : Վաշկինը, Վաշկովը եւ այն բոլոր ստորին ու բարձր պաշտօնեաները, որոնք որոշեալ դեր խաղացին հայ-թաթարական ընդհարումների մէջ — նրանք բոլորը արտայայտողներ, խրճիկներ էին այն զսպանակների, որոնց շարժիչ ոյժը գտնուում էր Պետերբուրգում՝ պետական կեղրոնատեղում :

Վանի որ կայ, գոյութիւն ունի Յարիզմը, օրհասի մէջ ընկած իր բողոքներին նա միշտ պիտի աշխատի դիմել այդ սխտէմին. նա դարձեալ՝ պահանջուած ժամանակին՝ պիտի անի, գործադրի այն, ինչ որ կատարեց երէկ : Եւ հետեւապէս՝ ո՛չ մի պայմանի տակ չպէտք է զինաթափ լինել, միշտ պատրաստ պիտի գտնուել և զրա հետ միասին շարունակել կռիւը Յարիզմի դէմ, մինչև նրա կատարեալ անկումը : Հայ-թաթարական ընդհարումների վերջ գտնելովը — եթէ նա վերջ պիտի գանի — կռիւը դադար չպիտի առնի. դա մի միջնագէպ էր մեծ գրամային. կռիւը՝ պայքարը անողը, անդուլ առաջ պիտի երթայ և հայ պրօլետարիատը, հայ զիւղացին զիտակից իր գասակարգային շահերին՝ իր փայփայած իրէտլին, նա իր մարտը պիտի շարունակի մինչև սոցիալ-դէմոկրատական սկզբունքների վերջնական յաղթանակը և տիրապետութիւնը :

Համագումարի մէջ գտնուող թաթար Ֆէօդալականութեան ներկայացուցիչները և նրանց իրէզուոյնները շփի շիտակ խոստովանեցան՝ որ իրենք ամէն ինչ արել են « զիտակցաբար », որ իրենք շատ լաւ են հասկացել իրենց կատարածի արժէքը և նպատակը : Վրանով թաթար Ֆէօդալականութիւնը յայտնում էր որ ինքը իր գասակարգա-

ինն շահի տեսակետից, ո՛չ միայն այս անգամն էր որ ուսու բռնապետութեան կողմը բռնեց, այլ նա նոյնը պիտի անի ամէն անգամ՝ երբ իր շահերը վտանգուած տեսնի: Աւրիշ խօսքով՝ նա իր գոյութիւնը համակից է համարում՝ Յարիզմի գոյութեանը և ձգտում է սրա նեցուկը լինելու:

Այս երկու զխաւոր կէտերի հետ աչքից բաց չը պիտի թողնել և այն հանգամանքը, որ թաթար երիտասարդութիւնը բացառապէս սուգորուած է թունդ նացիօնալիստական ոգւով և այժմս իր արած պրօպագանդան նուաճումներ է անում նոյն իսկ ժողովրդի ստորին խաւերի մէջ: Իսկ թաթար զիւղացիութիւնը և պրօլետարիատը գեռ բոլորովին անզիտակից իր դասակարգային շահերին՝ կարող է միշտ կոյր գործիք լինել թէ՛ այդ երիտասարդներին, թէ՛ իր ֆէօդալներին և թէ՛ Յարիզմի պաշտօնեաներին: — Այդ բոլորը աչքի առաջ ունենալով՝ ո՛չ միայն մենք զէնք վար դնել չենք կարող, այլ մենք միշտ պատրաստ պիտի գտնուինք ամէն տեսակ յարձակում՝ յետ մղելու, որ կողմից էլ որ այդ լինի:

Մենք՝ Հնչակեաններս չենք կուռում թաթարների դէմ ազգայնական, ցեղային հօդի վրայ, մենք չենք ուզում նրանց գուրս հրել և նրանց տեղը նստել, մենք չենք ուզում նրանց դնել նուաճումների գրութեան մէջ — երբէք, եթէ մենք կուռ ենք մղում նրանց դէմ, եթէ մենք սուր ենք հանում՝ այդ միայն այն պատճառով, որ թաթար ամբոխը յարձակողական մի գործիք է հանդիսանում Խաների, Բէկերի, Աղալարների և նացիօնալիստների ձեռքին, որոնք իրենց կողմից հարպատ գործիքներ են ուսու բռնապետութեանը: Թաթար զիւղացին, թաթար պրօլետարիատը, եթէ իր դասակարգային շահերի զիտակցութիւնը ունենար, պատմական ներկայ բողոքների մէջ՝ նա ձախ կողմը կանգնած պիտի լինէր, բայց քանի որ նա աջ կողմն է անցել և գտնուում է մեր թշնամիների բանակի մէջ, բնական է որ մենք այժմս դէպի նա նոյն ընթացքը պիտի բռնենք, ինչ որ ունինք դէպի նրանք, որոնք պաշտպան և սիւններ են Յարիզմին ու արդէլք են հանդիսանում սօցիալ-դէմօկրատական սկզբունքների երականացմանը:

Սօցիալ-Վէմօկրատական սկզբունքները իմաստակութիւն կլինէին, եթէ նրանք ստիպէին հայ պրօլետարիատին, հայ զիւղացուն և նրա ներկայացուցիչ կուսակցութիւններին՝ ձեռքերը ծալած նստել, զէնքի չը դիմել, միայն այն պատճառով որ նրանց կոտորող թաթարները անզիտակից պրօլետարներ և զիւղացիներ էին, ո՛չ, քաղաքակրթութեանը, յաւանդագիտութեանը, կուլտուրան իրեն թող չի տար զոհուելու, սրովհետեւ իր վրայ

յարձակուողը մի անզիտակից, տղէա և յետագէմ ոյժ է: Թաթար զիւղացին մեր իրական եղբայրը կլինէր, եթէ մեր շարքերի մէջ՝ եղած լինէր, բայց քանի որ այս և այն պատճառով ներկայումս ո՛չ թէ մեզ հետ չէ, այլ մեր դէմ է կանգնած սուրը ձեռքին՝ գազանի բոլոր բնազդներով զինուած՝ այդ ժամանակ մենք միշտ պատրաստ պիտի գտնուինք նրան արժանաւոր դասը տալու, մինչև որ խելքը զլխին գայ և իր իսկական բարեկամն ու թշնամին ձանաչի:

Պատրաստ, միշտ պատրաստ, — ահա մեր ազգանշանը ներկայ զինուած խաղաղութեան օրերում:

ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀ ԲՈՒՋՎԷԼՏԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

7 ՓԵՏՐՈՒԱՐ, 1906

ՊՐՆ. ԹՆՈՐՈՐ ՌՈՒՋՎԷԼՏ
ՄԻԱՅԵԱԼ-ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀ
ՌՈՒՇՈՒՄՏԸՆ.

Մերելի Տէր!

Բարեհաճեցէք ինձ տեղեկացնել՝ թէ արդեօք ի՞նչ անհրաժեշտ միջոցներ պէտք է ձեռք առնել, որպէսզի Հայկական Խնդիրը ընդհանուր հասարակութեան առաջը դրուի:

Ամերիկայի Հայ-գաղութները ի՞նչ գործնական միջոցներ ձեռք պէտք է առնեն, որ Չեզ առիթ տրուի Հայկական Խնդիրը Հաագի կօնֆերանսին ներկայացնելու՝ Ամերիկեան լիազօրների միջոցով, այնպէս որ Հայկական Խնդիրը պաշտօնապէս ձանչցուի միջազգային պետութիւններէն և հայ ժողովուրդը զբանից շօշափելի օգուտ կարողանար ստանալ:

Կը հաճէի՞ք այդ Խնդրի նկատմամբ ինձ հաղորդել Ձեր անձնական մտածմունքը և զգացմունքը: Ձերդ ամենահաստատրիմ, Թրօյի հայոց հովիւ՝ * * *

ՊԵՏԱԿԱՆ ԷՍՏՈՆԱՆՈՒԹՅՈՒՆ
ՌՈՒՇՈՒՄՏԸՆ

Փետր. 20, 1906

ԹՐՕՅ.

Տէր!

Նախագահը Պետական Գործոց Քարտուղարութեան յանձնարեց՝ ներկայ փետ. 7 թուակիր Չեր այն նամակին պատասխանելու, որով դուք հարցնում էիք թէ «Ամերիկայի հայ գաղութներ» ի՞նչ գործնական միջոցներ պէտք է ձեռք առնեն, որպէսզի առիթ տրուի Նախագահին՝ Հայկական Խնդիրը Հաագի կօնֆերանսի առաջը բերելու:

Մեր կոտավարութեան զանազան ճիւղերը յաճախակի արտայայտել են Ամերիկեան ժողովուրդի համակրութիւնը դէպի ամէն երկրների ճնշուողները. իսկ դժբախտ հայերի նկատմամբ՝ Ամերիկեան ժողովուրդը ինքը պերճախօս կերպով արձագանք տուեց իրա համակրութեանը: Ամերիկեան համար էլ անկասկած է թէ ինչպէս Նախագահը ցանկութիւն է ունեցել, որ հայերը կեանքի և սեպհականութեան ապահովութիւնը վայելեն, ինչպէս որ այդ միևնոյնը Եւրոպական Պետութեան էլ ներգաշնակ նպատակն է եղած:

Միացեալ-Նահանգները, որ Բեռլինի 1878-ի դաշնագրութիւնը ստորագրողներէն չէ, աւելի քան մէկ դարու անդիր օրէնքով իրեն թոյլ չի տուած մասնակցելու Եւրոպայի քաղաքական նպատակներին, շահերին և պատասխանատուութիւններին, ճիշդ այնպէս ինչպէս որ աւելի քան մի դար գոյութիւն ունեցող համահասարակութիւններու թեւաբան պետութիւններին թոյլատրուած չէ մասնակցելու կամ միջամտելու Արևմտեան Ասիայի միահեծան պետութիւնների քաղաքական գործերի մէջ:

Գաշնագրական պարտականութիւնների գործադրութիւնը Եւրոպական պետութիւնների միջև՝ որոշապէս մի քաղաքական հարց է, այնպէս որ Արևմտեան Ասիայում յարանց մէջ չի կարող ո՛չ ձայն և ո՛չ էլ մասնակցութիւն ունենալ՝ բացի պատշաճաւոր սահմանների մէջ իր համակրութիւնը արտայայտելուց: Միայն այն դէպքում, երբ Միացեալ-Նահանգները Եւրոպական որ և է պետութեան հետ շահակից կը ներկայանայ կամ Եւրոպական մի պետութեան գործունեութեամբը վնասի կենթարկուի՝ հակառակ միջազգային օրէնքի և արդարադատութեան, այդ ժամանակն է միայն որ Միացեալ-Նահանգները կարող է գործել՝ իր սեպհական իրաւունքները պաշտպանելու և իրեն եղած անարդարութիւնը վերականգնելու համար:

Հասգի մէջ պարբերական նստաշրջան ունեցող Գատարան չկայ: Հասգի մնայուն Գատարանը ո՛չ դատական կազմակերպութիւն ունի և ո՛չ էլ դատաւարական մի մարմին է, այլ միայն տալիս է անկողմնակալ իրաւագէտների մի խումբ, որոնցից՝ միջազգային դժուարութիւններ ծագած ժամանակին վիճող երկու կողմերը՝ իրենց սեպհական ցանկութեամբ՝ կարող են ստանալ իրաւարարներ կամ իրաւախոհներ: Եթէ Հասգի Կոնֆերանսի մէջ Հայկական Խորհրդը առաջ բերուի նկատողութեան համար, որպէս մի ընդհանուր առաջարկ, ապա աւելի պատշաճաւոր կ'ընէր որ այդ Խորհրդը ներմուծուէր մի այնպիսի կառավարութեան կողմից, որ ստորագրել էր Բեռլինի 1878ի դաշնագրութիւնը քան մի օրիշից որ դուրս էր այդ դաշնագրութիւնից: Երբ մի անգամ Հայկական Խորհրդը Կոնֆերանսի առաջը գրուի Միացեալ-Նահանգների պատուիրակները կարող են նրա լուծմանը գործակցել ազատ և թոյլատրելի սահմանների մէջ: Ոմանք թելադրում են որ Նահագահ ձեռնորոշութիւն ստանձնի մի մասնաւոր Կոնֆերանս կազմելու՝ Հայկական Խորհրդը լուծելու համար բայց այդ առաջարկը նոյնպէս ընդունելի չէր կարող լինել, ինչպէս ընդունելի չէր կարող լինել այն առաջարկը, որ Եւրոպական մի պետութիւն իրեն իրաւունք կտար մի մասնաւոր Կոնֆերանս հրահրելու Ամերիկեան մի հասարակապետութեան վարչական ներքին ինքիւնները կամ Ամերիկեան մի ուրիշ հասարակապետութեան դաշնագրական յարաբերութիւնը կարգադրելու:

Թուրքիայի հայ հպատակների տանջանքները բարձրօրէն դարձան և բուժում են ազազակում: Այդ տանջանքները ցնցում են ամբողջ մարդկային ցեղի մարդկայական զգացմունքը և ամբողջ աշխարհը միահաղոյն ողբում ու գատապարտում է ցեղային այն հակամարտութիւնները, որոնք իրարու դէմ են հանել թրքական ազգաբնակչութեան տարբերը ինչպէս որ այդ միևնոյնը անում են թաթարները չրեաների

դէմ Ռուսիայում: Ոչ մի ուղղամիտ մարդ այդպիսի դէպքերում չի կարող ակունտես լինել՝ առանց փափաք զգալու արգելելու այդ բանը: Ես շատ անկեղծօրէն կցանկանայի որ Միացեալ-Նահանգները այդպիսի մի ոյժ ունենային, բայց համահասարակեղծութեամբ էլ համոզուած եմ, որ մեր ջանքերը, զորկ լինելով իրաւական և ուժեղ միջամտութիւնից քիչ կամ ոչինչ կանէին և իրենց հետ կբերէին ուրիշ մի պետութեան կշտամբաքը, նրա գործերի և շարժառիթների՝ նկատմամբ, և այդպիսով շատ մեծ բարիք արած չէինք լինել այն դժբախտ զոհերի համար, որոնց բարբիտի ենք ձգտում: Իսկ ինչ որ վերաբերում է բարոյապէս համոզուելու—դժուար թէ դա այժմ կարողաւայ որ և է դեր խաղալ: (*)

Մնամ. Տէր. Չերք հաւատարիմ ծառայ Robert Bacon, Acting Secretary

ՌՈՒՍԵՑ ԱՂԱՏԱՐԱՐ ԸՆԹՄԵՆ ՀԵՌԵՆՈՒՄԸ

Ռուսաստանում տեղի ունեցող շարժումները, մանաւանդ 1905 թուին ընթացքում, իրենց վրայ են սեւեռել բովանդակ աշխարհի մամուլի լուրջ ուշադրութիւնը: Բայց վստահ կարելի է ստել, որ այդ մասին գրողներից և ոչ մին այնպէս խորը ուսումնասիրած չէ ուսական շարժման ընթացքը և այնպիսի փաստացի ու անողջ մտքեր արտայայտած չէ Ռուսաստանի ներկայի և սպագայի վերաբերմամբ, ինչպէս Կ. Կ. Կ. Կ. Ստորե կը դնենք նրա ամենաուշագրաւ յոգուածներից մէկի հարազատ թարգմանութիւնը, որը պարզ գաղափար կտայ ընթերցողին այն պատմական երևոյթի մասին, որ կուռում է ուսական ազատարար շարժում: Կուցկիի այդ հիանալի յոգուածը գետեղում է «Vorwärts»-ի 23 համարում և կրում է «Ռուսաց ազատարար շարժման հեռանկարը» վերնագիրը: Ահա նա.

«Նոր տարուց սկսած խիստ տխուր լուրեր են գալիս Ռուսաստանից: Ըստ երևոյթին յեղափոխութիւնը բողոքովն ձնչուած է: Ոչ միայն բէակցիան, այլ և ազատամիտները (լիբերալների լէգէոնը) հրձոււմ են այդ բանից: Արդարեւ նրանց բողոք, այսպէս սսած, նուիրական իղձերն այսօր թաթախուած են որեան լերդերի մէջ, բայց այդ հանգամանքը ուս ազատամիտներին այնքան էլ չի անհանգստացնում, բաւական է, որ նրանց կեդրոնները փրկուեն: Սակայն որքան էլ յոյսերնութեամբ մանչէ բէակցիան, այնուամենայնիւ յեղափոխութիւնը տակաւին կենդանի է:

Այն նուիրական երգը, որ երգում էր 1851 թուին Ֆրանսուհի Ռասը՝ 1848 ին թաղում յեղափոխութեան յարուժեան մասին, համապատասխանում է Ռուսաստանի այսօրուայ յեղափոխութեան դիրքին:

Մոսկուայի դեկտեմբերեան անցքը համեմատելով Պարիզի յունիսեան յեղափոխութեան հետ՝ գտնում ենք, որ նրանք բաւական նման են միմեանց: Ինչպէս 1848 թիւ յունիսին Պարիզում այդպէս և Մոսկուայում կառավարութիւնը ձնչեց պրոյետարիատի սպառազնուած ապստամբութիւնը, կամենալով՝ նախ քան նրա զօրեղապէս կազմակերպուիլը, նախ քան բաւարար

(*) Փոխանակուած այս շահեկան քղաքական քննարկ մեր տէտարիանը կտանք «Հեղափոխ» յաւարդ քուով:

չափով ընդդիմադիր այժ գոյացնելը՝ ջախջախել բան-
ուոր դասակարգը: Ինչպէս այն ժամանակ Պարիզում
ճիշդ այդպէս և այժմ Մոսկուայում պրօլետարիատը կը-
ւում էր անմահ հերոսութեամբ, իսկ զօրքերը ա-
րիւնքադրութեամբ սարսափելի կոտորածներ են ա-
նում: Ինչպէս Պարիզում, այդպէս և Մոսկուայում յե-
զափոխականների պարտութիւնը ցնծութիւն պատճա-
ռեց հակայեղափոխութեան զօրավիգներին ամբողջ
երկրում:

Բայց այստեղ վերջանում է երկու ապստամ-
բութեանց նմանութիւնը: 48 թուի յեղափոխութիւնը
սոսկ Պարիզեան յեղափոխութիւն էր, այդ մայ-
րաքաղաքը տիրապետում էր ամբողջ երկրի
վրայ, միայն նրանում էր աչքի ընկնում յե-
զափոխական պրօլետարիատը: 24-րդ մի երկիր, դեռ չսօ-
սելով Ռուսաստանի մասին, որ մի հատիկ քաղաք
ունենար այն ահագին նշանակութիւնը ինչ որ ունէր
Պարիզն անցեալ դարի կէսերին Ֆրանսիայում: Եթէ
Մոսկվայի պրօլետարիատը պարտութիւն է կրել, գա-
ղեւ չի նշանակում, թէ պարտուել է Ռուսաս-
տանի պրօլետարիատը: Ոչ պրօլետարական բանակ-
ներ կան և՛ Պետերբուրգում, և՛ Օրեսայում, և՛ Վի-
էվում, և՛ Վարշավում, և՛ Լոձում և այլ տեղեր՝
աւելի զօրեղ, աւելի կենսունակ: Արդարև, նրանք խիստ
յօգնել են՝ ամբողջ մի տարի տեղը պայքարից,
բայց երբէք չեն կորցրել իրենց արիւթիւնը: Նրանք
միայն ամբողջում են իրենց ոյժերը որպէսզի վերըս-
կրեն ազատարար շարժումը: Բացի այդ՝ Ֆինլան-
դիայի ոտքն ու ձեռքն աղւտ է այժմ, իսկ Անգլո-
պալեան երկրում, Կովկասում և Սիբիրում դեռ ար-
ծարձում է ապստամբութեան հուրը: Բայց կայ դեռ
աւելի խորը մի զանազանութիւն ներկայ և յուրիսեան
յեղափոխութիւնից յետոյ առաջ եկած գրութիւնների
մէջ: Այն ժամանակ գիւղական գասակարգը
բեակցիայի կողմն էր, որովհետև Ֆրանսիական մեծ յե-
ղափոխութիւնը 1789 թւին տուել էր գիւղացիներին
այն ինչ որ ցանկանում էին նրանք ըստ որում և
նրանց այնպէս էր թւում, որ 1848ի յեղափոխու-
թիւնն այլևս ոչինչ չէր կարող տալ իրանց: Եւ ի-
բրք՝ 48ի յեղափոխութիւնը միայն հարկերը աւելացրեց
գիւղացոց վրայ նա բարձրին հարկաւոր չէր վերջիս
և միայն գործերի ընթացքը կասեցրեց: Որքան շուտ
վերջ գտնէր այդ յեղափոխութիւնը՝ այնքան աւելի լաւ կը
լինէր գիւղացոց համար: Ու այն եղանակը, որի ներ-
քև քօղարկուած էր հակայեղափոխութիւնը, որին գը-
լուխ էր կանգնել ոչ թէ մի որ և է կալուածատեր,
այլ ի՞նչը՝ Նապոլէոն Գ., որը դեռ այդ ժամանակ պա-
շարուած էր առաջին կայսրութեան արքայաժողով:
Ըստ որում և գիւղացիք երազում էին, թէ շուտով
Նապոլէոնը յետ կը դարձնէ այն ժամանակները երբ
Մայր-Ֆրանսիան մեծ էր ու զօրաւոր և ելք Ֆրան-
սիական գեղջուկների բանակը Նապոլէոն Աի ղեկա-
վարութեամբ տիրում էր ամբողջ աշխարհին:

Մինչդեռ ռուս գիւղացին, ընդհակառակը, ներ-
կայուած գտնուում է այնպիսի մի գրութեան մէջ որով խիստ
յիշեցնում է մեզ Ֆրանսիացի գեղջուկի վիճակը նախ
քան մեծ յեղափոխութիւնը (1789 թ.): Անտանելի
է ռուս գիւղացու գրութիւնը, որից մի այն մի ճանա-
պարհ կայ դուրս պալու — սեպհականատիրութեան պայ-
մանների յեղաշրջումը և մեծաբանակ հողերի բաժան-

մամբ:
Ահա դրանով ձեռք կը բերէ ռուս գիւղացին
իր ցանկացածը: Մինչդեռ ռուսական հակայեղա-
փոխութիւնը վարում են, ընդհակառակը, գիւղացու
հակառակորդները, ըստ որում և հակայեղափոխու-
թիւնը հնարաւորութիւն չի տալ ռուս գիւղացուն ձեռք
բերելու ինչ կալուածատերերի հողերը, զա փակում
է գիւղացու ճանապարհը թնկանթիւնով և ամեն
միջոցներով: Բացի այդ, ովքեր են հակայեղափոխու-
թեան զօրավիգները, ոչ այն պայմանները, որոնք դեռ
երէկ ստեղծեցին Մանչուրիայի աղէտները: Ռուս գիւ-
ղացին այսօր մի գիտակից տարր է և ելքէք չէ
կարելի համեմատել նրան 48 թ. Ֆրանսիացի գեղջու-
կի հետ: Որտեղ մի արշաւաք է կատարում բա-
ցարձակ եղանակով, ինչպէս Կովկասում և Վիճիանդե-
այում, այնտեղ մեք ականատես ելք լինում և՛ գիւ-
ղացու արշաւաքին: Ֆրանսիացի գեղջուկները 48 թ.
պաշտպանում էին հակայեղափոխութիւնը, որտեղ հը-
նարաւոր էր լինում այդ օրինակ՝ ընտրական քուէ-
ներով, մինչդեռ ռուս գիւղացիք ներկայուած հարկա-
ղում են կառավարութեան հանել իրենց դէմ ամ-
բողջ զօրաբանակներ: Նրանց զսպելու համար կառա-
վարութիւնը ստիպուած է պիմել ամենաճարայեղ մի-
ջոցները, որպէսզի են՝ ամբողջ գիւղեր մոխիր գարձը-
նելը և ամբողջ նահանգներում գիւղատնտեսութիւնը
քարուքանդ անելը . . .

Ահա թէ ինչ է շինում ռուս կառավարութեան
զօրքը, նա այնպէս է աւերում երկիրը, ինչպէս ա-
ւերում էր Գերմանիան 30-ամեայ արիւնահեղութիւն-
ների միջոցին: Իսկ Եւրոպական բօրսայի գայլերն Տրոյ-
ւում են, կարծելով թէ այդպիսով բանապետութեան
շանսերը կը բարձրանան: Գուցէ հրի և սրի քա-
ղաքականութեան սկզբին յաջողուի սարսափ ազգել գիւ-
ղական դասակարգի սրտին և թիրեւս նրանք կորցնեն
էլ իրենց արիւթիւնը և «խաղաղուեն» բայց դա մի-
այն նրանց կարիքները կը կրկնապատկէ, որոնք և կըր-
կին ոտքի կը հանեն նրանց: Արդ, ի՞նչ է մնում ա-
նել տնաւեր գիւղացուն: Մերք քիչ առաջ յիշեցինք
30-ամեայ պատերազմները Գերմանիայում: Հէնց դրու-
նից առաջացած աւերութիւններն էին, որ մղում էին մարդ-
կանց՝ սիրայօժար կամ աւելի ուղիղն ասած, հրամա-
յողական կարիքից հարկադրուած՝ շարունակելու սկսուած
կռիւր: Որիչ ի՞նչ կերպ կարող էին վարուել իրենց
տնից վտարուած գիւղացիք: Հէնց այդպէս էլ հակա-
յեղափոխութեան գործած աւելի մոտեցնելը ստեղծում
են ռորանոր բանակներ զժողովների որոնք կուզեն և
կը հարկադրուեն պատերազմ յայտարարել տիրող կար-
գերի դէմ, կարգեր, որոնք բացէ ի բաց թունաւո-
րում են նրանց կեանքը: Եւ ինչպիսի միջոցների ա-
սէք՝ չեն դիմել այդ զժողովները: . . . Մի բան շատ
պարզ է, որ նրանք չեն թողնիլ երկիրը որ խաղաղուի
և կը դիմեն ամեն տեսակ խլրտուցների: Անկարելի բան
է, որ ինքուստրիան դիմանայ այդ ամենին և կարողա-
նայ օգտուել նրանցից, որպէս վարձու՝ բանուորից:
Լքուած հասարակական կեանքն ու արդիւնաբերու-
թիւնը չէ կարող վերականգնել, մինչև որ վերանայ
հակայեղափոխութեան սպիտակ ակրորը: Գա խիստ ու-
շագրաւ գանազանութիւն է՝ յուրիսեան Յեղա-
փոխութիւնից յետոյ ստեղծուած կացութեան և
Մոսկուայի կռուից յետոյ արդի գրութեան միջև:

48ի յեղափոխութիւնն արդիւնք էր 47ի առեւտրա-արդիւնաբերական ճգնաժամի: Յեղափոխութեան զսպառնալից ճգնաժամը թուլացաւ, գործերը կարգի ընկան և այնպէս էր թուում, թէ հակայեղափոխութիւնը յարթանակեց և ուժեղացաւ:

Մինչդեռ ոուս կառավարութեան արդի սպիտակ տէրրոջը ընդհակառակը, կը սաստկացնէ արդիւնաբերութեան ճգնաժամը, որը երկար տարիներից ի վեր ուժասպառ է դարձնում երկիրը: Ընդգրկին եւ վերջին երաշտ տարին և անբերութիւնից յառաջացած թշուառութիւնը կարտայայտուին մօտիկ յառաջիկայում:

Ապաստամբութեան ճնշելը ոչնչացնում է մի շարք արդիւնաբերական միջոցներ նա ահագին բազմութիւն մարդկանց զրկում է մի պատառ հացից ճնշումը ինքն էլ ահագին ծախսերի դուռ է բաց անում: Սեպհական ժողովուրդի դէմ մղուած ներքին կռիւը նոյնքան թանգ է նստում և զոհատար, որքան և արտաքին թշնամու դէմ պատերազմելը: Գեռ երէկ Մանջուրիան դատարկեց ոուսաց պետական գանձարանը և այսօր կրկին հարկաւոր է փող ձարել, որպէսզի կարելի լինի «նուաճել» հարազատ երկրի անսահման տարածութիւնը և ժողովուրդը պահել սարսափի մէջ. . . Բռնապետութիւնը միշտ կատուան ունի զօրքից և չինովնիկներից ուստի և նա պէտք է իր այդ երկու նեցուկներին միշտ գրաւէ աւելի բարձր ուժիկներով ու զանազան պարգևներով, այստեղ արդէն ցամաքում են արասաստանեան փոխառութեան աղբիւրները: Չպէտք է մոռանալ, որ նոյն իսկ խաղաղ ժամանակներում ոուս բռնապետութիւնը միայն այդ փոխառութիւններով էր խուսափում կատարեալ սնանկութիւնից: Որպէսզի կարողանայ մի կերպ եօյա գնալ ոստիկանական կառավարութիւնը պէտք է հոգայ այն բոլոր ծախսերը, որոնք սակայն չեն ծառայում նրա գոյութեան պահպանմանը ներկայ րոպէում: Նա պէտք է ծածկէ երկրի տնտեսական և կուլտուրական զարգացման համար անհրաժեշտ եղող ծախսերը, ինչպէս օրինակ երկաթուղիների կառուցումը ջրանցքների բացումը, և այլն, և այլն: Մանաւանդ որ Ռուսաստանում կառավարութիւնն է իսկապէս խոշոր արդիւնաբերութեան սպառողը, աւելի քան որ և է ուրիշ կապիտալիստական երկրում, խոշոր արդիւնաբերութիւնն Ռուսաստանում իր ապրանքների մեծ մասը սպառում է կառավարութեան վրայ: Արդիւն դադարեց ըստպատելուց — կանգ կառնէ և՛ ինքուստրիան:

Այնուամենայնիւ այդ բոլոր «խնայողութիւններն» անկարող են դեռ փրկել նրան ֆինանսական անկումից: Թողթագրամն էլ խոչընդոտների կը հանդիպի, որովհետեւ նրա «ց ծածկելու համար բաւականաչափ օսկի չկայ: Այնք զրամների այս ձևը միաժամանակ կտայ կառավարութեանը նոր միջոց, բայց նա այդպիսով վերջնականապէս կը քայքայէ երկրի դրամական սիստեմը, իսկ ներկայումս մանաւանդ դա խիստ վտանգաւոր մի խաղ է ոուս կառավարութեան համար:

Արդու-երեք ամսից զգայի կզանայ և նոր առեւտրական դաշինքների ազդեցութիւնը, զրանք բոլորովն կը խանգարեն բոլոր դաշնակից պետութեանց տնտեսական կեանքը, բայց այնպիսի կազմալուծուած-թուլացած մի երկրի համար, որպիսին ներկայացնում է այսօր Ռուսաստանը, դա աւելի վտանգաւոր կլինի քան որ և է ուրիշ դաշնակից պետութեան համար:

Սակայն և կարող է լինել, որ առեւտրական դաշինքները կառաջացնեն ընդհանուր առեւտրական ճգնաժամ:

Մինչդեռ արևմտեան Եւրոպան վերջին տարիներում տնտեսական թուլչքներ էր գործում, դեռ չը յիշած Ամերիկան, որտեղ արդիւնաբերութիւնը առասպելական բեզմնաւորութիւն էր ցոյց տայիս — Ռուսաստանն ընդհակառակը տնտեսականապէս շատ թոյլ էր զարգանում:

Խտացած նշանները օր ըստ օրէ ցոյց են տայիս, որ շատ էլ հեռու չէ ճգնաժամը — կապիտալիստական տնտեսութեան ամեն մի փայլուն շրջանի այդ անխուսափելի վտանգները: Գուցէ նոր առեւտրական դաշնագրութիւններն այնպիսի մի մրրիկ յառաջացնեն, որ յիստորուն շրջանի նուազը, որն առանց այն էլ սաստիկ երբեւում է բոլորովն ընկղմի Երբ բանն հասնի համաշխարհային ճգնաժամի, այն ժամանակ աւելի կը սաստկանայ ուսական ճգնաժամը որը վերոյիշեալ պատճառներով սարսափելի հետեանքներ կուեննայ:

Մենք համոզուած ենք, որ որչափ երկար տևէ ռեակցիայի սոսկալի տերրորը, այնչափ աւելի յուսահատական կը դառնայ ամբողջ ոուս ժողովուրդի զբուրութիւնը, այնչափ էլ կը սաստկանայ դատարարների աւանդութիւնն ու կատաղութիւնը դէպի այդ ռեժիմը: Բռնութեան լուծը թօթափելու ամէն մի նոր քայլ կգտնէ մեծ համակրութիւն, նպաստ և գործակցութիւն այն բոլոր հասարակական տարրերի կողմից, որոնք դեռ բոլորովն չեն զայրացել և չեն դուրս եկել համբերութեան սահմաններից:

Գրութիւնն այնպէս է, որ մէն մի զօրեղ շարժում ընդդէմ բռնապետութեան անհնար կլինի խեղդել: Իսկ այդպիսի ըմբոստացումներ արդէն պատրաստում է Ռուսաստանի պրոլետարիատը, որը աշխարհին ցոյց տուեց արդէն հերոսութեան և անձնուիրութեան նշանակելի օրինակներ:

Այստեղ էլ մենք նկատում ենք մի ուրիշ գաւնազանութիւն՝ Պարիզի յունիսեան և Մոսկուայի դեկտեմբերեան ապստամբութիւնների միջև: Ինչպէս այնտեղ, այդպէս և Մոսկուայում մըում էր պատանէշային կռիւ, բայց Պարիզում այն ժամանակ ի գործ էր դրում հին պատանէշային եղանակի փշրանքները, մինչդեռ Մոսկուայում մենք տեսնում ենք մի նոր ձև, ըստ որում և այսօր վիճելի է դառնում Ֆրեդրիկ Էնգելսի այն հայեացքը, թէ պատանէշային կռուի ժամանակն արդէն անցել է: Այդ կարծիքն է յայտնում Էնգելսը Մարքսի «դատարարագային կռիւը Ֆրանսիայում» վերնագրով բրօշուրին կցած իւր յառաջաբանում: Ճշմարիտ է այն միայն, որ պատանէշային գործողութեան հին եղանակի ժամանակն է անցկացել: Այդ բանն ապացուցեց Մոսկուայի կռիւը, որտեղ յեղափոխականի կուրծքը ամբողջ երկու շաբաթ յիմադրում էր ժամանակակից արտիլերիայի բոլոր միջոցներով զինուած թշնամուն դէմ: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ Մոսկուայում վաղօրօք պէտք է գոյութիւն ունենային նպաստաւոր պայմաններ, Չօրքը ցնցուած էր և կազմայուծուած, բանն այնտեղ էր հասել, որ կառավարութիւնը ստիպուէր էր հետեակ զօրքի մեծ մասը զինաթափ անել և բանտարկել զօրանոցներում, վախենալով որ նրանք կարող էին միանալ ապստամբներին: Ընդգրկին Մոսկուայի ազգաբնակչութեան ըն-

դարձակ խաւերը ապստամբութեան կողմն էին և մեծ եռանդով օգնութեան էին հասնում ապստամբներին: Մարտնչող յեղափոխականները ոչինչ չէին կարող տեսել, եթէ բանուորների ահագին մեծամասնութիւնը չըշտապէր նրանց օգնութեան: այդ ահագին բազմութիւնը չէր մասնակցում կռուին, բայց նրանք զարմանալի արագութեամբ, կարծես մի կախարդական մղումով, ծածկեցին: Մոսկուան պատնէշների անվերջ ցանցով: Այդ պատնէշները (բարրիկադ) քանդելու համար զօրքն ստիպուած էր սպառել իր բոլոր ուժերը:

Մոսկուայի ապստամբութիւնը վերջնական յաղթութիւնը կտանէր այն դէպքում միայն եթէ միևնոյն ժամանակ տեղի ունենար և՛ ընդհանուր գործադուլ: Ենթէլը իր յառաջաբանը գրելիս շատ քիչ բան էր իմանում ընդհանուր գործադուլի էութեան մասին, ըստ որում և չէր կարող ի նկատի առնել այդ խիստ կարևոր հանգամանքը: Մենք շատ թէ քիչ գաղափար կազմեցինք քաղաքական ընդհանուր գործադուլի մասին միայն՝ շնորհիւ վերջին տարուան ուսուսական տակախիսի: Այդ տակախիսի ցոյց տուց որ յարաւել ընդհանուր գործադուլով կարելի է խզել դիսցիպլինան զօրքի մէջ: Կա ապացուցեց, որ զօրքը անկարող է երկար ժամանակ դիմադրել սոսկ ոստիկանական ծառայութեան, որը ո՛չ բուսականութիւն է առթում նրան և ո՛չ էլ — փառք: Մոսկուայի օրինակը ցոյց տուեց նոյնպէս, որ վճռական գործողութիւնների ժամանակ անհրաժեշտ է սարքել մասսային գործադուլներ: Եթէ Ռուսաստանի միւս քաղաքների մասնաւոր Պետերբուրգի, բանուորներն այնպէս ուժասպաս չլինէին Մոսկուայի ապստամբութեան ժամանակ եթէ նրանք կարողանային, ինչպէս հարկն էր, ընդհանուր գործադուլով զրկել կառավարութիւնը սգնական զօրք ուղարկելու հնարաւորութիւնից, եթէ կառավարութիւնը այնպէս քայքայուած ու բաժան-բաժան եղած լինէր, ինչպէս հակոսմբեր ամսին էր, — այն ժամանակ դեկտեմբերեան ապստամբութիւնը անպայման յաղթութիւնը կտանէր:

Ահա թէ ինչ սովորեցրեց մեզ Մոսկուան: Բայց թէ այդ փորձառութիւնը ո՞րպիսի ազդեցութիւն կունենայ ներկայ պայքարի յետագայ ընթացքին վրայ, մանաւանդ հեռուից չէ կարելի նախատեսել: Ռուսաստանի բոլոր շարժումներից մինչև այսօր մենք այն տեսանք, թէ ինչպէս «չկազմակերպուած ամբոխը» ճակատագրականօրէն և՛ բոլորովին անպատեհ կերպով ոտքի է ելնում, այդ շարժումներից և ո՛չ մէկը յատակագիծ չունէր և ո՛չ էլ նախապատրաստուած էր: Շատ չի անցնիլ, հաւանականօրէն, և կը կրկնուի միևնոյն բանը:

Մենք չենք կարող այժմից իսկ բնորոշել յետագայ կռուի եղանակը, բայց մի բան արևի նման պարզ է, որ մենք համարձակ կերպով կարող ենք սպասել սխտած կռուի շարունակուելուն և որ ներկայ տարուողգեցիկ խաղաղութիւնը ոչ այլ ինչ է եթէ ոչ փոխորդից առաջ տիրող խաղաղութիւնը:

Հոկտեմբերի շարժումները ցոյց տուին քաղաքային և գիւղական ժողովրդին, թէ որպիսի ահուելի ոյժ է նա պարունակում իր մէջ: Յունուարի ընկալիցիան մղեց նրանց դէպի կսկիծով ու սարսափներով լի անդունդի բերանը: Բէակցիան գրգռեց ամենքին և զինեց իր դէմ: Արքան էլ և թանգ նստի ժո-

ղովրդին՝ նա պէտք է ազատուի այդ անդունդից: Թող հակայեղափոխութեան սև ուրուականը կարաւ ազատութեան համար ընկած զոհերի շիրմին վրայ — այնուամենայնիւ շուտով տեղի կունենայ մեռելոց յարութիւնը: Մտտ է ահագն դատաստանը և յարութիւն կառնէ պրոլետարիատը: — Հ. Ա.

ՀԱՆԳԱՄ ՀՐԱԲՈՒԽՆԵՐ

Մեր պատմական կեանքի ընթացքում մենք շատ անգամ ենք մուսացութեան տուել մեր ինքնապաշտպանութիւնը և սպառնել «աստուծընտիր» ինքնակաշններին սպասելով նրանցից մեր թշուառ վեճակի թեթևութիւնը: Ահա՛ իսրայէլ՝ Օրիից մինչև վերջին ժամանակները մենք չենք կարողացել ձեռք քաշել այդ սխալ քաղաքականութիւնից: Բաւական է յիշել մեր եկեղեցական գումարները գրաւելու ժամանակից այն օրինակը, թէ որքան արժէք ունեցան կաթողիկոսի խնդիրները գումարները յետ դարձնելու առիթով: Տխրահաճակ Պլեհվէն գոռոզարար յետ էր դարձնում այդ ժամանակ ամբողջ հայ ազգի ներկայացուցչի խնդիրները՝ խիստ արհամարհական ձևով:

Մեր յեղափոխական կուսակցութիւնները շատ վաղուց են այդ հասկացել և թողել են կեանքի բարւոքման մասին մտածելու այդ ձևերը: Սակայն վերջերս առաջ եկած նորաբողքը սահմանադրական-ուսկալմարական կուսակցութեան հայկական հատուածը այլ կերպ է մտածում: Կա չկամենալով դաւաճանել մեր պատմական սխալ քայլերին, հաւատում է դեռ որ մեր կեանքը աւելի հեշտ կը բարեփոխուի եթէ կրկին դիմենք խնդիրների և աղերսանքների ձևերին: Այդպէս այդ կուսակցութեան օրգաններից մէկը վերջերս Քըրանսիայի Անգլիայի հասարակական և պետական գործիչների Ռուսվէլտին դիմելու, Հայոց Խնդրի Իրուսիքում խնդրագրի առիթով, հետևեալ բազմիմաստ առաջարկութիւնն է անում. «Մենք առաջարկում ենք Ռուսաստանի հայ ազգին ևս ի դէմս ներկայացուցիչների դիմել Ռուսաց թագաւոր կայսրին . . .» (Երևի տաճկահայերը պիտի դիմեն իրենց Սուլթանին): Եւ այդ առաջարկը անելով լրագիրը յոյս ունի, թէ Ռուսաց կայսրը Հայոց Խնդրի լուծմանը ցանկալի ընթացք կտայ:

Այդ յոյուածի ոգին շատ բան է ասում մեզ՝ պրոլետար բանուոր դասակարգիս, գրուած սողերից պարզ երևում է, թէ ինչպիսի կարգերի երկրպագու է այդ նորաթուխ կուսակցութիւնը և ինչի համար պատրաստ է խաշուել:

Այդ կուսակցութիւնը (եթէ նա կայ իսկուպէս մեր լայն խաւերի մէջ) առաջ գալով առանձնապէս վերջերս չեշտում էր, թէ մենք հայերս և բոլոր նախկին այսպէս ասած, «առաջադէմ» կուսակցական երս պէտք է յարենք այդ սահմանադրական-ուսկալմարական կուսակցութեանը: Իսկ ի՞նչ է այդ կուսակցութիւնը խոստանում պրոլետարին և ի՞նչ պիտի ստանայ նրանից բանուորը, — այդ մասին մի հարցնէք: Այսբանը պարզ է, որ եթէ պրոլետարը հետևէ դրանց առաջարկին, նա ո՛չ թէ որ և է մի շահ կտանայ՝ այլ կկորցնէ շատ բան:

Յայտնի է, որ բանուոր կուսակցութեան մտաւորաւ նպատակն է վերջ տալ միապետութեան և դրա համար գլխաւոր միջոցը համարում է ժողովրդային զինուած ապստամբութիւնը, ուրիշ խօսքով յեղափոխու-

Թեան ճանապարհը՝ Մինչդեռ այն կուսակցութիւնները, որոնց շահերին հակառակ է բանուորի գրոհը, միշտ աշխատել են մեղ համոզել, ժանաւանդ հոկտեմբերեան մանիֆէստից յետոյ, թէ պէտք է թողնել զինուած ապստամբութիւնը և դիմել խաղաղ, կուստուրական, էփօլիցիստական միջոցներին:

Վա՞ է արդեօք մօտալուս ուղին: Ահա մեր պրօլետարիատը իր դասակարգային նպատակներին, եթէ լսէ գրանց նէյնիմներին, օրսինքն՝ աշխատե խաղաղ ճանապարհով իր միսիան գլուխ բերել:

Տեսնենք թէ ինչ են ասում հասարակական գիտութիւնները:

Իււրաքանչիւր պետութիւն իր էութեամբ և կազմութեամբ ո՛չ այլ ինչ է, եթէ ոչ դասակարգային մի կազմակերպութիւն: Այնտեղ, ուր գոյութիւն ունի մասնաւոր սեպհականութիւնը, պէտք է պահպանել և կարգի բերել թէ՛ մասնաւոր սեպհականատէրերի փոխադարձ յարաբերութիւնը և թէ՛ գրանց փրօքերու վէպի չքաւորները: Գրա համար էլ խնդիր կարիք է զգացուած ստեղծել պետական օրէնքներ և հիմնարկութիւններ: Իսկ այդ մասնաւոր սեպհականութեան յափշտակումների ձևի մէջ մի հիմնական անարդարութիւն կայ, այդ այն է՝ որ պետութեան մէջ ամենախոշոր սեպհականատէրերը հանդիսանում են ամենաուժեղ անհատները: Գրանք են, որ պետական կազմին ու ընթացքին տալիս են ուղղութիւն իրանց շահերի տեսակէտից: Ամեն մէկը ձգտում է այնպէս կազմակերպել պետութիւնը, որ գրա միջոցով որքան կարող է լայն չափերով հասնէ իր նըպատակին: Այդպիսով, ուրեմն՝ օրէնքները ու հիմնարկութիւնները պետութեան մէջ ինքն ըստ ինքեան դաւնում են դասակարգային: Գրասակարգային կռուի մէջ գերիշխող դիրք բռնելու միակ զօրեղ միջոցը պետական իշխանութեան ձեռք գցելն է: Եւ գրան է, որ ձգտում են ամեն միջոցներով հակառակ կողմերը: Միայն այն դասակարգը կարող է իր շահերը գլուխ բերել, որը իր ձեռքում կունենայ պետական զիկը: Ներկայումս մեզանում այդպիսի դասակարգային գերիշխանութիւնը միապետութեան ձեռքին է: Եւ այդ չարիքը միայն մի բան գիտէ, այն է՝ ծծել չքաւորների ախիւն քրտինքը՝ նրանց բոլորովն անտես առնելով:

Հիմա հարց է գալիս թէ ինչպէս կարելի է ըս պայտել ներկայ հանգամանքում, որ միապետութիւնը լսէ մեր խնդիրները և զիջէ մեղ, երբ նա ինքը շատ լաւ գիտէ, որ մեր ցանկացածները կատարելով վաղը աւելի լայն գիտակցութեան մէջ ինքը կկենդանուի: Միապետութիւնը չէ կարող զիջել և լսել մեր խնդիրները, որովհետեւ թեթեւ զիջումը նրան կզնի այն դրութեան մէջ, ինչ որ է բարձրից գոյրուողը: Միապետութիւնը միայն տեղի կտայ ուժի առաջ:

Եւ այդ բոլորից յետոյ խորհուրդ տալ խընդիրներով դիմել:

— Ո՛չ, պարոններ, պահեցէք ձեր խնդիրները ձեզ համար: Բանուորը՝ պրօլետարը առանց ձեր խորհրդների լաւ գիտէ իր անելիքը: Նա գիտէ, որ ժամանակակից հասարակական կեանքը ո՛չ այլ ինչ է, եթէ ոչ մշտական կռիւ: Նա գիտէ ամբողջ դարեր է, որ տեղի ունի կատարի կռիւ հարուստի և աղքատի միջև, տեղի ունի խոշոր ընդհարում հասարակական բարձունքի վրայ կանգնած իշխողների և բուն ժողովրդական հասարակ խաւերի մէջ: Նա գիտէ, որ

մի կողմից փոքրամասն հարուստների և իշխողների առաջ կանգնած է թէ՛ քաղաքի և թէ՛ գիւղի միլիոնաւոր չքաւոր մասսան՝ ժողովրդական զանգուածը: պրօլետարը գիտէ, որ բոլոր հարստութիւնը ստեղծում է ինքը, բայց այդ հարստութիւնից ոչինչ չէ օգտուում: Նա գիտէ, որ այստեղից առաջ եկած՝ կռիւը անխուստիքի է և օրհասական: Նա գիտէ, որ տիրապետողների դասակարգը իր գիրքերը պահելու համար շարունակ զինուած է սուբստրուկ և կատարելագործուած թնդանոթներով: Ու թուլացնելու, յաղթելու համար այդ հիդրային միապետութեան բանուորը առաջ է բերում կարգին կազմակերպութիւն: Իսկ այդ կազմակերպութիւնը չէ կարող իր թշաւու առաջ դուրս գալ խնդրաբերով, աղերսաբերով, այլ միմիայն նոյն միջոցներով, ինչ որ գործ է դնում իր գերիշխանութիւնը պահելու համար փոքրամասն իշխանութիւնը:

Հարկաւոր է միթէ ասել, որ այդ մասսայական կազմակերպուած ուժից խիստ վախենում է միապետութիւնը: Հարկաւոր է միթէ ասել որ նա վախից դրուած ըստիպուած է կանգ չառնել տմարդի կոտորածների առաջ իսկ: Այլ կիրպ չէ էլ կարելի թոքրամասն իշխանութիւնները միշտ ստիպուած են եղել մասսայի գիտակցութիւնը թմրած պահել, իսկ եթէ այդ էլ չօգնէ, այն ժամանակ առաջ են բերել երկկող ու սպանանալը, կոտորած, թնդանոթ և մինչև անգամ օտար զօրք:

Այդ բոլորը գիտէ բանուորութիւնը: Նա գիտէ, որ ներկայիս մա նրա համար է միապետութիւնը կատարում և շարունակ ցաստկացնում իր խստութիւնները, որովհետեւ պրօլետարը ինքն էլ խիստ կազմակերպուած ոյժ է ներկայացնում:

Չեսնել այդ, ինչպէս ասացինք, նշանակում է չհասկանալ այդ օրէնքները կամ խիստ հիասթափուել միապետութեան ժամանակաւոր խստութիւնների առաջ, ուրիշ խօսքով՝ մի ժամանակ իրանցից հօւր արձակող, բողբօղ կովկասեան quasi-յառաջադէմները այժմ ո՛չ այլ ինչ են, եթէ ոչ հանգած հրաբուղիներ:

Իայց մի՛ մոռացէք, յարգելի խաղաբարներ, որ ձեր դիմաց կանգնած է այ չմարած հրաբուղի-բանուոր դասակարգը, և եթէ նա ներկայումս լսել է, դա դեռ չի նշանակում որ յաղթուած է: Չէ՛ որ գործող հրաբուղիներն էլ շատ անգամ ունենում են հանգիստ դրութիւն: Համարել այդ դրութիւնը հանգած նըշանակում է ծաւօթ չլինել բնութեան ուժերի հետ: Ի՞նչ մոցէք որ բնութեան մէջ չմարած հրաբուղիները ունենում են հանգիստ դրութիւն, այդ ժամանակ նրանց խառնարանից բղխող շոգին ու գաղերը վկայում են, որ հրաբուղիի ներսը մի բան պատրաստում է: Իսկ ուժգին բռնկումները առաջ են գալիս յայտնի ժամանակներում:

Եւ միթէ ձեր առաջ այդ հուժկու հրաբուղիսը՝ պրօլետար դասակարգը՝ միապետութեան վերջին ժամանակաւոր ծայրայեղ խստութիւններից էլ յետոյ դուրս չի թողնում իր ներսում կկկող նիւթից այրող գաղեր:

Վուցէ դուք չէք հաւատում, որ ուժգին բռնկուածները առաջ են գալիս յայտնի ժամանակներում: — Այն ժամանակ ինչո՞ւ էք խօսում ամբողջ հայութեան կողմից: Բայց շատ կարելի է հայութիւն անելով դուք աչքի առաջ չունէք հայ պրօլետար դասակարգը՝ այլ

միայն հայ բուրժուազիան, և վերջին ենթադրութիւնը աւելի քան հաւանական է: Լաւ չէր լինիլ, որ այդ մասը աւելի լաւ պարզուէր:

ԺԱՆԻՔ

12 ՄԱՐՏ 4906 ԱՍՏՐԱԽԱՆ

ՍԵՒ ԾՈՎԻ ԱՓԵՐԻՑ

Տխուր իրականութիւնը որ երկու ամիսց ի վեր գորուում է մեր առաջ — է՛ բանտ, արքոր, ձերբակալութիւն աջ ու ձախ, տեղի և անտեղի Ամբողջ Ռուսաստանը բանտ է, ցարիզմի ամբողջ պաշտօնեաները խուզարկիչ բարակներ են . . . Օրհասի մէջ տապալակող ցաւազար Նիկոլա Բ. ի կառավարութիւնը գրուելը կորցրած Զ պօսական հարուածներէց՝ ալեկոծեալ ծովի ալիքներին խաղալիք դարձած մարդի նման՝ որ քան որ աշխատում է երեսը, ափ դուրս գալ, այնքան էլ աւելի է հնաւնում խորերն է տարուում՝ վերջնականապէս յատակը երթալու համար: Նենգ Ախտտէի, դաժան Գուրնովօի, այդ երկու ճարպիկ լարախաղաց կատակերգուների դաւադրական քաղաքականութիւնները իրարու կցուած, մասսայական ձերբակալութիւններով մտածում են վերջ դնել այն յեղափոխական շարժան, որ իր վերջնական կէտ նպատակին ունի սօցիալ-դեմոկրատական սկզբունքների իրագործումը: Մինչև այս վերջին ամիսների ընթացքում քաղաքական ձերբակալութիւնների թիւը հասնում է 74 հազարի, եթէ ոչ աւելի: Դա մի ահագին թիւ է, ի հարկէ, բայց «Սուրբ Ռուսաստանի» ջերմ պաշտպանները կարծում են թէ դեռ այդ քիչ է «հայրենիքը» ազատելու համար յիստորիկալ «ներս ձանկերից: Ինչ ասել կուզի որ «հայրենիք» ասելով նրա տիրոջստուր պաշտպանները ուրիշ ոչինչ չեն հասկանում եթէ ոչ իրենց շահերի տիրապետութիւնը և ճնշուած դասակարգերի հպատակութիւնը: Զոհեմքեր 17ի մանիֆէստը «Ախտտէեան» քաղաքականութեանը միջոց եղաւ երևան հանելու և թակարդի մէջ գցելու ամբողջ Ռուսաստանի «անբարեխառն» ինտելիգէնտները և այն բոլոր ոյժերը, որոնք վճռել են մինչև վերջ շարունակելու իրենց «անբարեխառնութիւնը»:

Ելալթ յում: Սև-Ծովի ափերի այդ հիանալի բուժարանում, 17ի չարագուշակ մանիֆէստից յետոյ, ահա երկրորդ անգամն է ինչ անհատուկ ենք լինում գաղափարացած ոստիկանների կամայականութեանը: Անց ենք կացնում ձերբակալութիւնների երկրորդ շերտը: Առաջին ձերբակալութիւնների միջոցին, որ տեղի ունեցան անցեալ թուի գեկտեմբերի վերջերին, քաղաքացի և նրա շրջակայքի գիւղաքաղաքներից և կայուածքներից կալանաւորեցին 93 հոգի ամենայաւ մտաւոր ուժեր պրօպագանդիստներ, ագիտատորներ, ուսանողներ, ուսանողուհիներ, և այլն: Իսկ այս անցեալ բարեկենդանի շարժումայ ընթացքում, ձերբակալութիւնների երկրորդ շերտում, մեր ոստիկանութեան համար տօն չկար. նրա ամբողջ ուշադրութիւնը գրաւուած էր խուզարկութիւններով և ձերբակալութիւններով իսկ մօտակայ Սևաստապօլ քաղաքից, ուր հանգչում է Ռուսիայի Սև-Ծովիան զինուորական նաւատորմիցը, գիշերով ժամանած զինուորական նաւերը փոխադրում էին ձերբակալուածներին ծովազրեայ կերչութեօգոսիա, Սևաստապօլ քաղաքների բանտերը: Թէև և այս անգամուայ ձերբակալուածների ճիշդ

թիւը մեղ յայտնի չէ, սակայն, այնուամենայնիւ, մեր կարծիքով, հարկերից աւելի կը լինի և ո՛չ պակաս: Այս բանտարկուածների թիւում, իմիջի սյոց, գտնուում են Մասսանդրա, Ա. Գանիլ, Մագարաչ և Նիկիտա պարտեզի արքունական տան պատկանող կալուածների բանուորական Միացեալ Ըկերութեան ներկայացուցիչները, նոյն պարտեզի այգեգործական-գիտեգործական ուսումնարանի մի ուսուցիչ և 9 աշակերտներ, Մագարաչի գիտեգործութեան Բարձրագոյն կուրսերի լեկտօր քիմիկոս-գիտեգործը (կովկասցի), քաղաքի սօհ. մանագրական. ուսակալարական կուսակցութեան յայտնի անդամներ՝ Եարցեվը, Բօգանովը, և այլն:

Յեղափոխական կուրը Ելալթայում մղուած Հընչակեան կուսակցութեան և Ռուսաստանի Սօցիալ-Գէ. մօկրատիայի կողմից վայրագ կառավարութեան դէմ, այժմ դադարել է. այսինքն նա դադարել է հըրապարակային լինելուց: Իսկ այդ ժամանակաւոր դադարը, երևի, ամենայն հաւանականութեամբ, միաժամ կառավարութիւնը յեղափոխական շարժման կատարեալ պարտութեանն է վերագրում: Սակայն դա աններելի միամըտութիւն կը լինէր վերջինիս կողմից: Հնչակեան բոլոր ընկերները ինչպէս և նրա զինուորական մարտիկ խումբը, որ անցեալ յեղափոխական շարժումների և ցոյցերի մէջ առաջնակարգ տեղը գրաւած ունէր՝ Ռուսաստանի Սօց. Գէ. մօկրատիայի շարքերում վաստակած ունեւնանալով ճշմարիտ յեղափոխական տարրերի համբաւ, իրեն կողմն ունենալով նաև ուսու հանգիստտես ազգաբընակութեան յիստուրն համակրանքը՝ միախառնուած վերջիններիս երիցս կրկնուած «կեցցէներով» և ծափահարութիւններով, — օրէց օր աւելի զօրեղ կերպով են տողորում սօցիալիզմի վերջնական փառուոր յողթանակովը: Իսկ մեր ուսու ընկերները այժմ ամենայն տեղ, ինչպէս և մեզանում, զբաղուած են ներքին կալմակերպութեան և պրօպագանդայի խնդրով, ջանալով գալիք օրերին աւելի մահարբեր հարուածներ հասցնել, Հնչակեան կուսու խմբերի հետ համերաշխ, Նիկոլա Բ. ի ուժասպառ եղած, օրերը հաշուած կառավարութեանը:

ՋԻԱՆՇԻՐ

4 ՄԱՐՏ 1906 ԵԱԹԱՅ

ՄԻԵՂԵՏՈՒԹԵԱՆ ՄԻ ՆՈՐ ԽԱՂԸ

Երբոր միապետական բէժիմը հատ ու կտոր դեղումներ էր անում յեղափոխական հոսանքի առաջ, և ծայրայեղ յեղափոխական կուսակցութիւնները միշտ անում էին թէ չպէտք է բաւականաաւ և խաբուել այդ զիջումներից, չափաւորականները և ազատամիտները, սովորաբար, մեղադրում էին մեղ, յեղափոխականներին և յոյս երը դնում միապետութեան վրայ: Մինչդեռ անցեալ պատմական դառն փորձերը յեղափոխական կուսակցութիւններին տուել էին այն խըրաւոր, որ ցարի կառավարութիւնից ո՛չ մի լաւ բան յօգուտ ժողովուրդի ոչինչ սպասելու չէ: Միապետութիւնը միայն ծանր թոպէներում զիջում է թեթեւ կերպով՝ մաքրել խաղաղացնելու համար: Անցնում է վտանգաւոր րօպէն ցարի կառավարութիւնը աստիճանաբար, անկատելի, երբեմն նոյն իսկ յանգու գն կերպով սկսում է խել իր բոլոր տուածները: Այդպիսի դէպքեր շատ են եղել: Անցեալ դարու 60-ական թուականներին Սևաստապօլի խայտառակ ջարդից յետոյ՝ առաջ եկան բարեխորտուածներ, որոնք

իսկոյն և եթ աստիճանաբար խլուցցին և մինչև 90-ական թուականները «մեծահիշուն» բարենորոգումներից ո՛չ մի հետք չմնաց:

Հոկտեմբերեան մանիֆէստը տրուեցաւ նոյն իմաստով: Չանցաւ երկար ժամանակ, հազիւ երկու ամիս և ահա բէակցիան եկաւ ու սկսեց մէկ-մէկու յետեւից խլել առւած ազատութիւնները: Մի օր խլեց տպագրական խօսքը, միւս օր՝ ժողովների ազատութիւնը և վերջապէս ներկայումս, «ազատարար օրերի» բարենորոգումներից, չէ. թողուած ո՛չ մի գիծ, ձիշգայնպէս ինչպէս 60 ական թուականների բարենորոգումներից, այն զանազանութեամբ միայն, որ առաջին դէպքում կատարուեց տարիների ընթացքում, իսկ այս վերջինը՝ ամբողջի: Ներկայ կառավարութիւնը աւելի բիրտ հանդիսացաւ: Սակայն ցուալին այն է, որ այդ պատմական խաղերից ո՛չ մի դաս չառնեցին ազատամիտները և չափաւորականները, նրանք նոյն իսկ բէակցիայի առաջ չվճատեցան: Չէ՛ որ մենք ունինք Պետական Գումա, — ասում էին չափաւորականները, — կսպասենք մինչև որ Գուման գումարուի և այն ժամանակ կպահանջենք, սակայն կգնենք, կչափաւորենք ցարի անյագ ակտիւտակը:

Որպիսի միաժողովրդեան

Այդ երազները, ինչ ասել կուզէ, միապետութիւնը գիտէր և դրա առաջն էլ շտապեց առնել: Պարզեք մեր ասելը: Աերջերս պետական Գումայի բացման առիթով մի՛ ինչ որ կանոնադրութիւն մշակուեց: Այ՛ո՛, մի զարմացէք դա մշակուեց ո՛չ առանց նպատակի: Նպատակներից ամենազիւստըն է կրճատել Գումայի իրաւունքները: Արգարագատութեան միտքը տիրաճուռակ ուն Ակիմով մտցնում է նոր յօդուած, որով յայտարարում է թէ Գումայի անդամները իրաւունք չունեն քննելու բարձրագոյն իշխանութեան գործողութիւնները: Գրանից յետոյ դպիս է մի այլ յօդուած, որտեղ մասնանիչուած է իշխանութեան իրաւունքները, դրանց մէջ են և այն ուկաղները, որոնք հրատարակում են Գումայի իրաւունքից անկախ:

Բայ երևոյթին դա մի աննշան գիծ է, սակայն՝ լուքնելուց յետոյ՝ դա շատ բան է նշանակում: Այդ յօդուածները հիմնովին փոփոխում են Գումայի նըշանակութիւնը: Գրանցով սահման է դրուում Գումայի իրաւունքների մէջ: Այդ փոփոխութիւնները մտցրնելուց յետոյ՝ Գուման ոյժ չի ունենալ պաշտպանելու իր հրատարակած օրէքները: Նա ստիպուած կը լինի կամ՝ հաշտուել օրէքները խանգարող և սահմանափակող ուկաղների հետ և կամ՝ կուռել դրանց դէմ՝ յեղափոխական միջոցներով: Հոկտեմբերեան մանիֆէստը ասում է՝ առանց Գումայի հաւանութեան ո՛չ մի օրէք չէ կարող հրատարակուել, մինչդեռ հիմա ասում են որ՝ «բարձրագոյն ուկաղները չեն ենթարկուիլ Պետական Գումայի քննութեան»: Եւ կթէ մենք աչքի առաջ ունենանք այն հանգամանքը թէ մինչև այսօր Ռուսաստանը կառավարուել է ո՛չ թէ օրէքներով, այլ ուկաղներով և գաղանի հազարազրութիւններով, — պարզ կլինի, թէ ի՛նչ գին կարող են ունենալ Գումայի հրատարակած օրէքները տպագրում, երբ նրանց հետ զուգընթացաբար կը հրատարակուեն ուկաղներ՝ հին ձևով:

Այդ հազարազրութիւնները և նախարարական

բացատրութիւնները որ մեն անգամ կոյտերով թափուում են իւրաքանչիւր օրէքից յետոյ՝ իբրև թէ պարզելու համար օրէքի անհասկանալի կետերը, — իբր զրանք ոչ այլ ինչ են, կթէ ոչ զրօի հաւատարեցնել տուած օրէքները և նրանց նշանակութիւնը ոչնչացնել: Համեմատեցէ՛ք հոկտեմբերեան մանիֆէստը ներկայիս ժամանակաւոր այն օրէքների և բացատրութիւնների հետ, որոնք հրատարակուած են տպագրական խօսքի, ժողովների ազատութեան, ա՛յ՛ ձի անձեռնմխելու թեան համար և կտեսնէք, որ հոկտեմբերեան մանիֆէստի հետքն անգամ չկայ: Մենք կասենք աւելին, ներկայումս տպագրական խօսքը աւելի վատ դրութեան մէջ է, քան մինչև մանիֆէստը, բանտերն էլ այժմ աւելի լիքն են քան առաջ: Ներկայումս Ակիմովի մտցրած նորութիւնը աւելի լայն իրաւունքներ է տալիս անպիսի սանձարձակ քեմահաճոյքների որի դէմ յեղափոխականները շարունակ կուռել են:

Ահա ձեզ դարձեալ մի նոր ետալ, որ գոլիս է կրկին ու կրկին հաստատելու յեղափոխական կուսակցութիւնների ծրագիրը, թէ յեղափոխական մասսայական զինուած ապստամբութիւնը միայն վերջ կտայ միապետութեան անվերջ գաւերին: Եւ մենք շատ ուրախ ենք, որ ներկայ բէակցիան գործում է այդպիսի միջոցներով, որովհետև դա յօդուած բանտարութեան է, այդ անվերջ գաւերն են, որ արագ կերպով յեղափոխականացնում են երկիրը: Ակիմովի այդ քայլից ապատամիտները ու չափաւոր կուսակցութիւնները կը կին վճատուած են և յոյսները կտրած միապետութիւնից:

— Ուզէք չուզէք — կասէք մեր սղատամիտներին, — իրերի դրութիւնը և պատմական կեանքը կտալէ ձեզ մօտենալ բանտար կուսակցութեան և վերջնականապէս յետ դարձնել ձեր երեսը միապետութիւնից, որովհետև բանտար կուսակցութիւնը այն առանցքն է, որի շուրջը պտտուում է պատմական ա՛նձը:

Թող Ակիմովի այդ վերջին գաղիք քայլը մի անգամ էլ ձեզ համոզէ, ս՛վ ապատամիտներ, թէ մօտենալով բանտար կուսակցութեան և երես դարձնելով միապետութիւնից, դուք կտանաք և՛ ձեր ազատութիւնը:

1 ՄԱՐՏ, 1906 ԹԻՖԼԻՉ

ՄԻ ԳԵՆԻ ԵԿԵՄԷՅ ԽՕՄԻԵԻ

Հասարակական խնդիրներով հետաքրքրուող ամենանհատ չի կարող այն համոզուած չունենալ թէ կուսակցական նոր և ընդհանուր խնդիրներ ծագելիս՝ նրանց վճուողը կլինի այդ կուսակցութեան գերագոյն մարմինը՝ ընդհանուր Պատգամաւորական Ժողովը կամ կուսակցական Համագումարը:

Անշուշտ չի կարելի պնդել որ մի Համագումարի բոլոր որոշումները բացարձակապէս ճշմարիտ և ուղիղ կարող են լինել, բայց դրա հետ միասին չի էլ կարելի ասել, որ անհատների կարծիքներն էլ բացարձակապէս անսխալ կարող են լինել:

Բայց քանի որ մի կուսակցութիւն հատարական մարմնի բոլոր ստորոգելիներն ունի, քաղաքակրթութեան թիւը միայն մի միջոց է գտած — այն է՝ կուսակցութեան մէջ նոր խնդիրներ տարակարծիքութիւններ ծագած միջոցին տանող, ուղղութիւն տալ տիրապետող կողմը կլինի Պատգամաւորական Ժողովի մեծամասնութեան կոյտ-

ցրած որոշումը

Անշուշտ գրանով չի ջջւում դժգոհ անհատի իրաւունքը, ո՛չ նա կուսակցութեան մէջ մնալով հանդերձ, կարող է հաւատարիմ մնալ իր սեպհական անհատական համոզումներին և միւս անգամ այդ միւս ոյն խնդիրը հերթական դարձնելով՝ օրակարգի շեղմանից մէկն անել՝ պատշաճաւոր ժողովներին մէջ և ջանալ ընդհանուր համոզում գոյացնել իր ասածների ճշմարիտ լինելուն և հաւաքական որոշման սխալ լինելուն նկատմամբ, ու եթէ հնարաւոր է նախկին որոշումը փոխել տալ մեծամասնութեան հաւանութեամբ և նրա տեղը գնել տալ նորը՝ իր սեպհական նախկին մտածմունքը, որ այնուհետեւ հանրական տիրապետող և ուղղութիւն տրուող կուսակցական որոշում կդառնար:

Վաղաքական ո՛չ մի կուսակցութեան մէջ անհատի պատմութիւնները և նրա իրաւունքները այնպէս ապահովուած չեն, ինչպէս որ Սօցիալիստ Կազմակերպութիւնների մէջ: Այստեղ՝ եթէ անհատ անգամը հաւաքական որոշումից դժգոհ մնայ, ո՛չ որ նրան չի հրամայել լուր և հպատակել, — երբէք, նա ազատ է և կատարեալ իրաւունք ունի ո՛չ միայն իր անհատական համոզումները պահել, այլև ջանալ կազմակերպութեան համազել իր դաւանածի ճշմարտութեանը — կուսակցութեան ամենափոքր կողմակերպութիւնից մինչև ամենաբարձր հաստատութիւնը այդ միջոցները և իրաւունքը լիութիւն տալիս են նրան:

Մեր մէջ, դժբախտաբար, դեռ կուսակցական դիսցիպլինան տիրապետող չէ, և այդ երեւոյթը նկատուած է մեր բոլոր կուսակցութիւնների մէջ: Մեզանում երբ մէկը իր ասածի և մտածածի նման չգտաւ ընդհանուր որոշումը, նա այլևս չի աշխատել՝ օրինականութեան սահմանների մէջ մնալով՝ իր կարծիքները առաջ տանել և մի օր ընդհանուր սեպհական հանձնարարութեան դարձնել, ո՛չ այլ նա փրփուրը բերածին առաջին րոպէից իսկ հրապարակ կնիտուի և իր առաջին գործը կանի քանդել, ինչ գնով էլ որ լինի, և այդտեղ գաղանացած մարդը այլևս մոռնում է ամեն ինչ, մոռնում է որ ինքը իր տգիտութեանը զոհ գնալով՝ տուպալել է ուղղում այն, ինչի համար որ երէկ կեանքն էր տալիս:

Անշուշտ մենք չէինք կարող ենթադրել իսկ, որ Հնչակեան կուսակցութեան Ե. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովի որոշումները հաւաստաբար հաճելի և դուրեկան կարող էին լինել բոլոր մասնակցողներին, ո՛չ կարող էին դժգոհներ լինել, բայց նրանք միջց և իրաւունք ունէին իրենց մտածմունքները յատուկ տանել և մի օր իրենց կարծիքներին ընդհանուր որոշման գրոշմն տալ, երբ մեծամասնութեան հաւանութիւնը կառնէին: Բայց մեր քաջերը այդպէս չարեցին, նրանք երբ անսան որ իրենց մտածմունքները ընդունելի չեկան, մի առանձին քաջագործութիւն համարեցին քանդումի փողը փչել: Ի հարկէ մի կուսակցութիւն քանդելը շատ վեր էր այդ տխուր դերը սահմանողների ոյժերից փորձը արեցին, թէ և կուսակցութիւն տղմի մէջ ընկան հէնց առաջին վայրկեանից:

Մեր ծիծաղախան արգահատանը չենք կարողանում բանել, երբ մասբերում ենք թէ ինչ մի առանձին փութկոտութեամբ և հրձկանքով կովկաս ժան մուսուլի մի մասը աճապարեց արձագանք տալ զաժակի մէջ ամփոփուող այդ փութկոտիկին: Այդ պա-

րաները երեւի կարծեցին թէ վերջապէս աղատուեցան Հնչակեան մղձաւանջից, բայց ո՛չ նա դատուեցան սրի նման իրենց գլխին միշտ կախ է, կարող են վեր վեր թաշել, կարող են քիթ ու պոտնդ ծռել, բայց նա կայ ու կայ մինչև իր պատմական միասնախի աւարտումը:

Ընդենք բուն խնդիրն: Երեւանի Հնչակեան մասնաճիւղից 53 հոգի հրապարակով, կովկասեան թերթերի միջոցով, յայտարեցին որ իրենք հրաժարոււմ են Հնչակեան կուսակցութիւնից և միանում Բ. Ս. Գ. Բ. կուսակցութեան հետ:

Մէկ կողմ թողնելով այն որ իսկական անջատողները ո՛չ թէ 53, այլ 7 հոգի են եղել գանք այրող խնդիրն: Ինչո՞ւ են այդ մարդիկը հրաժարուել, — ահա իրենց պատճառաբանութիւնների առաջին կէտը:

«Ի նկատի ունենալով որ Հնչակեան կուսակցութիւնը անցեալում որպէս մի ամբողջութիւն նրուիրուած էր լոկալ տաճկաստանի դատին և դրանով ներկայացնում էր յայտարարող կողմից ազգայնական կուսակցութիւն»:

Վնենք համառօտակի այդ առաջին կէտը: Սա ուղղակի մի զաւեշտի կծիկ է, մարդ ապշում է սարգկային մօրի կաշկանդումիս վրայ երբ սա ընկնում է կոր հետևողականութեան մէջ: Փաստողները մի հարուածով սրբում են իրենց անցեալը և մոռացութեան տալիս, որ իրենք 18 երկար տարիներ Հնչակեան կուսակցութեան մէջ գործելով, որպէս Հնչակեաններ, իրենց ծրագրով, մասնաւոր, պրօպագանդայով շարունակ քարոզել, ասել են որ Հնչակեան կուսակցութիւնը, որպէս ամբողջութիւն Տաճկաստանի մէջ գործած մամանակին, ո՛չ թէ մի յազգայնական կուսակցութիւն էր՝ (ինչպէս որ այդ զաղափարը հասկանում են փաստողները), այլ սօցիալիստական, և միթէ այդքան շատ մոռացան կուսակցութեան մղած սկզբունքային պայքարը, չէ՞ որ հակառակորդները շարունակ պնդում լին որ Տաճկաստանի մէջ միայն «ազգայնական» կուսակցութիւն կարող է գործել և ո՛չ թէ սօցիալիստական, յիշում են իրենց մէջ բերած փաստերը այդ առթիւ:

Սա մի զաւեշտ չէ, ամբողջ 18 տարի իրենց սօցիալիստ յայտարարելի իրենց գործունէութիւնը սօցիալիստական համարել և 18 տարիից յետոյ վեր կենալ հրապարակապէս ասել, որ 18 տարի շարունակ իրենց կրթւնած, փաստած այն իօսքերը թէ իրենք սօցիալիստներ են և իրենց գործունէութիւնը սօցիալիստական, դրանք եղել են մի թիրիմացութիւն, մի սխալ, որ այդպէս պնդած, ասած մամանակին իրենք եղել են «նացիօնալիստներ» (իրենց ներկայ հասկացած մտքով) և իրենց գործունէութիւնը՝ նացիօնալիստական: զասակ է թէ 18 տարիից յետոյ խոստովանում են, որ իրենց հակառակորդների գրուածները ճիշդ էին, որ իրենք իրենց սօցիալիստ կարծած մամանակին՝ իսկապէս նացիօնալիստներ էին . . . Այդ զաւեշտի վրան ծիծաղ թէ՛ արգահատանց: Բայց ինչո՞ւ համբաւական հրհուրց առաջացնող այդ հակասութիւնը, այդ նոր ձև՝ փրփուլութիւնը, այդ mea culpa՞, — դա շատ պարզ է, այդ այ պէս և որովհետեւ պ Պլեխանովը ասել է որ այդպէս է և նրա խրճիկներն էլ կրկնել են, իսկ Երևանի էլ հտպիաներն տրուած հրահանգի համեմատ շարժուել . . . Բայց մենք ասել ենք և պիտի ասենք, որ խնդիրը երբ պարիս է հայ ժողովրդին ընդհանրապէս և տաճկաստանի մասնաւորապէս՝ մեր Սօցիալ-Դեմոկրատ (!) Պլեխանովը գաճոււմ է, այսպէս ասած, Սօցիալ-Դեմոկրատ կատիով, այ-

սինքն մասնում, զգում, իր շիղերը գրգռում են այնպես ինչպես որ միևնոյն գրութեան մէջ կրնաներ կատարել եթէ նրա առաջն էլ պնդէին այն բարձր խնդիրները, ինչ որ վերաբերում են հային կամ տաճկահայ ազատագրութեան գործին: Որովհետև պ. Ղլեխանովը կարծում է թէ Տաճկահայ Գաղութը գրադուող մի կուսակցութիւն անպատճառ նացիօնալիստական է (իր հասկացածի համեմատ) և գրադուողներն էլ նացիօնալիստներ ուրեմն մեր թաթոսներէ համար խնդիրը վճռում է և այլևս առարկութեան տեղ չի մնում: Իսկ թէ Ժօրէսներ, Գէղեր, Բերկներ, Կառնցիներ, Ֆերրիներ, Վանգերիլիներ, Ճիշտ նրա հակառակն են մասնում նոյն այդ խնդիրների նկատմամբ— դա մեր 18 տարից յետոյ հիասթափողներին չէ հետաքրքրում, նրանց խօսքը նշանակութիւն չունի: Եւ օտ զանազան անկախ կա՞ն մասն և:

Թուէ մենք կատարելապես համոզուած ենք որ Սօցիալ-Գեժօկրատ Ղլեխանովը կաներ այն, ինչ որ անում է ամէն Հնչակեան՝ եթէ Ռուսաստանը, ուստի ժողովուրդն էլ ենթարկուած լինէր նոյն այն զբոսութեան, որի մէջ այսօր գտնուում է տաճկահայը, բայց այդ մի կողմ թողնելով. հարց, ինչ դիրք կրունէ այդ Ղլեխանովը, եթէ վաղը Օսմանլին, Պարսիկը Մոսկուայի, Պետերբուրգի մէջ բաժանեն և իրենց սուրբ սեւթաղանը դնեն . . . Չնչ կասկածուած անգամ, որ ինքն էլ Բերկի, Գէղի նման կասի, որ առաջին զննակ արձակողը ինքն էլ ինքն:

Հնչակեան կուսակցութիւնը 18 տարի շարունակ որպէս մի ամբողջութիւն Տաճկաստանի մէջ գործելով՝ եղել է մի սօցիալիստ կուսակցութիւն, կանգնել է սօցիալիստական սկզբունքների և հողի վրայ, և այդ բնատրուութեամբ՝ նա այժմ էլ շարունակում է իր գործունէութիւնը այնտեղ, ու պիտի շարունակէ մինչև վերջ, նա երէկ այն էր, ինչ որ այսօր է՝ և հակառակը: Ո՛ր մի՛ խելքը գլխին սօցիալիստ չէ կարող պնդել թէ Տաճկաստանի մէջ գործող մի կուսակցութիւն միայն և միայն նացիօնալիստական կարող է լինել, որ սօցիալիստ մի կուսակցութիւն այնտեղ գործելու, երևան գալու իրաւունք և հող չունի: Սօցիալիզմը միակերպ մի շարքի չէ, որ ամեն երկրի վրայ էլ հաստատուելու ծածկի. նրա ձևերը, կիրառութիւնը իր արգաստան առաջնանները ունի նայելով տեղին և ժողովրդին:

Եւր 18 տարի շարունակ իրեն սօցիալիստ համարողը այսօր ասում է որ ինքը նացիօնալիստ է եղել, ապա շատ մեծ երաշխաւորութիւն չէ կարող լինել որ վաղն էլ իր այսօրուայ հասկացած սօցիալիզմը մի այլ ձևի չփոխեր իրեն:

Տաճկահայ Գաղութ այնքան նացիօնալիստական է, որ քան նացիօնալիստական է Ֆրանսիայի և Ֆրանսիական ժողովրդի գոյութիւնը Ֆրանսիայի Սօցիալ-Գեժօկրատների համար. Գերմանիա և պերմանական ժողովուրդը՝ Գերմանիայի Սօցիալ-Գեժօկրատների համար:

Անցնենք երկրորդ կէտին.

«Ի նկատի ունենալով, որ այն օրից երբ Հնչակեան կուսակցութիւնը Ռուսաստանում յայտարարելով Սօցիալ-Գեժօկրատական գործունէութիւն, նկատուեց երկրորդի բազմականութեան մէջ, մէկ կողմից լինելով Սօցիալ-Գեժօկրատ, և միւս՝ ազգայնական».

Բացատրենք: Նախ «բազմականութիւն» բառը մէջտեղից վերցնենք, սրովհետև իմաստ չունի այդտեղ, և շարունակենք խօսքի թելը:

Հետևողականութիւնը, ապստոբի միտքը այստեղ անելի է աչքի ընկնում: Անջատողները ասում, ընդունում են որ Հնչակեան կուսակցութիւնը կոմկոսի մէջ «Սօցիալ-Գեժօկրատական գործունէութիւն» յայտարարեց: Շատ լաւ, ճիշտ է այդ Բոյց հարց. եթէ այդ կուսակցութիւնը, որպէս ամբողջութիւն Տաճկաստանում գործելիս, «ազգայնական» եղած լինէր, իրենց ներկայ հասկացածի նման, այն ժամանակ այդպիսի մի «բազմականութեան» էլ պիտի հետևէր և՛ կոմկոսում: Տաճկաստանի մէջ «հայ կողմից ազգայնական կուսակցութիւն» եղողը կոմկոսի մէջ էլ «հայ կողմից ազգայնական կուսակցութիւն» կլինէր: Իսկ եթէ այդպէս չեղաւ և Տաճկաստանի մէջ որպէս ամբողջութիւն գործողը կոմկոսի մէջ «Սօցիալ-Գեժօկրատական գործունէութիւն» յայտարարեց. այդ փաստ և, ուրեմն, որ այդ կուսակցութիւնը արդէն հաստատուած էր Սօցիալ-Գեժօկրատական սկզբունքների վրայ: Եւ եթէ այստեղ գիտելիք մի կէտ կայ, այդ այն է՝ որ Հնչակեան կուսակցութիւնը, որպէս Սօցիալ-Գեժօկրատ մի կուսակցութիւն, Սօցիալ-Գեժօկրատիստ և Սօցիալ-Գեժօկրատական սկզբունքներ անելով հասկանում է այն՝ ինչ հասկացողութիւն որ այդ մասին ունին Գէղի, Բերկի, Ֆերրիի նման յայտնի Սօցիալ-Գեժօկրատները և ո՛չ այն՝ ինչ որ հասկանում և ջանք է անում, միաժիտ մտքերի վրայ ճշունում գործ գնելով, գործադրել պարսն Ղլեխանովը, որի Սօցիալ-Գեժօկրատական հասկացողութիւնը՝ ինչ որ վերաբերում է Ռուսաստանում գտնուող բազմակցուցիչ ժողովրդների մասին— գեւ մի կողմ թողնենք տաճկահայ խնդիրը, որի անունը լսելիս նրա ուղղափառ ջղերն են ցնցում— շատ չի տարբերում հանգուցեալ կատկովից, և վերջինիս այն առաւելութեամբ, որ ինքը բաց է ի բաց պայքարում, յայտարարում էր իր մոլեռանդ սլաւոֆիլութիւնը, իր թունդը նացիօնալիստականութիւնը: «

Նրա մարտնչների պատճառաբանութեան երրորդ կէտը: «Ի նկատի ունենալով, որ Հնչակեան կուսակցութեան Ռուսաստանի սասնածիւղերը որպէս Սօցիալ-Գեժօկրատական կազմակերպութեան այլևս անկարող են կապուած մնալ տաճկահայ ազգայնական գործունէութեան հետ»:

—7-10 հոգի և 1ա Ղլեխանով մասնողները իրենց իրաւունք չպիտի տալին խօսելու հարիւրից անելի Հնչակեան մասնածիւղերի անունով, եթէ իրենց մի փոքր համեստ լինէին: Այդտեղ իրենց սլաւոֆիլ վարժապետն է մեղաւոր, եթէ ոչ՝ Հնչակեանները շատ էլ և համոզուած են որ իրենց կոմկոսի մէջ իրենց ուրոյն կազմակերպութիւնը և գոյութիւնը պահելով՝ Տաճկաստանի իրենց ընկերների հետ կարող են կապուած մնալ՝ որպէս մի ամբողջութիւն, առանց մազաչափ դաւաճանած լինելու իրենց Սօցիալ-Գեժօկրատական սկզբունքներին և նրանցից բղիթած պարտականութեան ու իրաւունքի երկին: Հնչակեան կուսակցութիւնը տուել է գաղափարի այնպիսի հերոսներ, մաքի այնպիսի հոյակապ նախատակներ, Տաճկաստանի մէջ, որ նրանց սուրբ յիշատակին առաջ սլաւոֆիլ Ղլեխանովները, իրենց բոստ աչքերով, միշտ կարող են ժողովուրդ մնալ ստուերի մէջ: Հնչակեանութիւնը Տաճկաստանի մէջ կատարել և կատարում է մի գործ, որին կապուած լինել պիտի քարոզելին նոյն այդ Ղլեխանովները, եթէ նրանցից ամէն մէկը Սօցիալ-Գեժօկրատ անուան տակ մի մի կատկովներ չլինէին: «Հնչակեանութիւնը սուլ-

խանականութեան զէմ մյած իր պայքարով ամենամեծ Սօցիալիստական գործն է կատարում — զրեց Ամերիկայի Սօցիալ-Գեոմոլիտաների պարագլուխը, կարող են կրկալ սրբան իրենց կուզեն, սերտովի խօսքերը չեն որ պիտի ազդեն Հնչակեանների վրայ:

Պլեխանովիստների շրթերը կէտն է

Պլեխանովիստները որ Հնչակեան կուսակցութեան Ռուսաստանում ունեցած առանձին կազմակերպական գոյութիւնը սահման է ստեղծում զանազան ազգութիւնների պրօլետարիատի մէջ և թուլացնում նրա գասակարգային ինքնաճանաչութիւնը:

— Օտարի նախաձեռնարանը աւելի հետաքրքիր է:

Մեր «Հրաժարւոյ» ներքին վերադարձ լուսաբայ մտքերից երևում է, որ ռուս-թրքական սահմաններից անդին եղող Հայը, նրա պրօլետարիատ մասը, մի այլ ազգութեան է պատկանում. իսկ այդ սահմանից այս կողմ եղող Հայը և նրա պրօլետարիատ մասը՝ մի ուրիշ ազգութեան: Ասենք՝ ազգերի կեանքի և նրանց «ազգայնական իրատուներ» ի մասին ճիշտ այդպէս է մտածում պ. Պլեխանովը: Բայց այդպէս է, չեն սխալում պ. Պլեխանովիստները: — Ինչ կարող ենք սնել ի մեծ ցաւ մեր «Հրաժարւոյ» Պլեխանովիստների գալիս ենք ասելու, որ բոլոր սօցիոլոգները, էթնոլոգները, աշխարհագրագետները, պատմաբանները, և նոյն իսկ տօրիստ յեղափոխականները, երկար զարեքից ի վեր այն համոզումն ունին, որ սահմաններից այն կողմ ելողը Հայ է և նա անբաժան մասն է կազմում կովկասէ մէջ եղած Հայերի: Յափշտակիչների, աւազակների ձեռքով գծուած սահմանները անանցանելի չեն մեզ համար, այդ սահմանները չկան, գոյութիւն չունին մեզ համար, նա մի մեծ գանձուած, մի մեծ ժայռ մի նուաճող ժողովուրդ է՝ որի ամենատարրական իրաւունքները խել և խլում են թէ՛ այդ սահմանի այս կողմը և թէ՛ այն կողմը. մէկի արած-կատարածը միւսի համար է, իր սյն ընդհանուր կեանքի մէջ, ինչ որ վերաբերում է մի հարստահարող, իրաւազուրկ ժողովրդի իրաւունքների վերականգմանը:

Մեր Պլեխանովիստները ինչու են թաղցում, ինչու բարձրաձայն չեն առում. «Մենք կովկասիներս մի տարբեր ազգ ենք, աւելի մօտիկ եսունքին, քան տաճկահայերին: Մենք մեր կոլտուրայով, մեր սովորութիւններով, մեր աշխարհայեցողութեամբ աւելի նման ենք ռուսերիտասարդին. ռուս մուսիկին, քան թէ՛ վանի, կարինի, Մուշի մէջ եղածներին, որոնց հետ եթէ ոչ և է նմանութիւն ունենց անցեալի մէջ, այժմս ոչինչ չունենք», — այս էլ է ձեր մասձմունքի խորշերում ելածը, եր միշտ թագուն էք պահում և քաջութիւն չունենալով՝ արագարակապէս տեսնու, բնկնում էք «նացիօնալիստ», «ազգայնական» բաների յետևից, որպէսզև աղպիսով, և միայն այդպիսով բացատրէք ձեր գասալքութիւնը և մինչև վերջ՝ ծածկէք ձեր հողու խորքը: Եղ որ սօցիալիզմը, որ ողորդ, որ սև հօգին, եթէ նա հրէշային չէ, եթէ նա Պլեխանովիստական և գաղափարի, թէ՛ կովկասի մէջ եղող Հայեր, զուր սահմանից այն կողմը գործ չունէք, ձեր սիրաբ, ձեր ուղեղը, ձեր զգացմունքը սահմանից անդին եղանների համար չպիտի գարկի, եթէ նայն իսկ այնտեղիները կը ջնջուեն, կը հասարեն. իսկ դուք, կովկասի մէջ գրտնուող 40-50 հազար Տաճկաստանցի հայեր, դուք էլ սահմանից այն կողմը բան չունիք, թէև այնտեղ են ձեր

տուն ու տեղը, ձեր բոլոր իրաւունքները, որպէս մարդ որպէս անհատ, որպէս ժողովուրդ: — Որ և է շիդի շափ կշիւն ունեցան Պլեխանովիստների այդ սասանները նրանց այդ ուղղութեամբ գործածները երկու տարիից ի վեր... Եղաւ այն, ինչ որ պիտի լինէր, ինչ որ սպասուում էր որ լինէր: Եւ երբ մեզ գալիս են յայտնելու հրապարակով իէ:

«Ճողովը միաձայն սրտեց միանալ Ռուսաստանի Սօցիալ-Գեոմոլիտական Բանուորական կուսակցութեան հետ և կոչուել Ռ. Ս. Գ. Բ. կ-թեան Երևանի կազմակերպութիւն», — դա մեզ երբէք ցաւ չի պատճառում: Եւ Երևանի Հնչակեան ժամաճիւղից «հրաժարույ» այդ 7 հոգին ո՛չ մի հետեանք չեն կարող յառաջացրնել տեղական մասնաճիւղի նկատմամբ. 7 հոգի աւելի կամ պակաս — դա ո՛չ մի նշանակութիւն ունի կամ կարող է ունենալ տեղական գործերի նկատմամբ, ինչպէս որ նայնը հրապարակապէս յայտնեց Երևանի Հնչակեան մասնաճիւղի վարչութիւնը: Ի զուր է որ մեր «Հրաժարւոյ» իրենց նոր կուսակցութեան ալիս են «Ռուսաստանի Ս. Գ. Բ. կուսակցութիւն» անունը, որովհետև այդ կուսակցութեան գլխին եկածը ցոյց տուեց որ ո՛չ միայն Պրլեխանովը շատ փոքր տեղ է բռնում ռուս սօցիալիստների շարքերի մէջ, այլև այն՝ որ այդ կուսակցութիւնը երբէք իր մէջ չէ ամփոփում բոլոր աղլիքի սօցիալ-Գեոմոլիտաներին:

Այս բոլորից յետոյ, պարզ է և այն, որ երբ Հնչակեանութիւնը տեսաւ թէ իր շարքերի մէջ կան մարդիկ, որոնք մտածում են թէ ռուս-թրքական սահմաններից անդին Հայ չ'իս, թէ Տաճկահայ Գասար պիտի թողնել և կովկասի մէջ ձուլուել Ռ. Ս. Գ. Բ. կուսակցութեան մէջ — այդպիսիներին, իր տուած արշումներով, տուեց կուսակցական մի արժանաւոր գաս:

Այժմ այդպիսիները համոզուած էին իրենց փաստերի ճշմարտութեանը, մեր կազմակերպութիւնը ամեն հնարաւորութիւն տալիս էր, կարող էին — այդպէս է պահանջում կուսակցական զիսցիպիւնան ամեն երկրների մէջ — շարունակել իրենց կուսակցութեան անգամ մնալ և միւս մուրհիւններին ներկայանալ և վիճարանութիւն յառաջացնել: Փխանակ զբան, նրանք այս ու այն կողմ վազեցին՝ «կուսակցութիւնը լուծուած է, սօցիալիզմը իր ծրագրից հանած է» հռչակեցին և ատամները թաղուած տեղերն էլ կուսակցութեան պատկանող զբաղները և զէնքերը Ռ. Ս. Գ. Բ. կուսակցութեան կօմիտեների տրամաբարութեան աւեր զբեցի:

Այդ դեպ ոչինչ «Հրաժարուոյ» ից ոմանք՝ օրուաքաղելով Ռուսաստանի խառնակ վիճակից և հաղորդակցութեան միջոցների ընդհատումից, դիմակաւորուած ներկայացան խեղճ հայաստանցիներին (Նեցի, վանեցի, քրդեցի) և նրանց ստորագրել տուեցին թղթեր թէ՛ «մենք հրաժարում ենք Հնչակեան կուսակցութիւնից և միանում Ռ. Ս. Գ. Բ. կուսակցութեան հետ, որովհետև նրանք պաշտպանում են տանկահայ Գասար. իսկ Հնչակեան կուսակցութիւնը այդ Գասար թողել է»: Մի փոքր ժամանակ անցնելուց յետոյ՝ ի հարկէ, ստորագրողները հասկացան այդ նենգամտութեան և ի արարիտութեան զուլս գործող, և թեցեցին այն մարդից վրայ, որոնց կեա երկ կուրորեն հաւատում էին:

Այս ամենից յետոյ մի բան շահեցան